ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> ապրիլ 2021թ. N 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԲԱՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ և 18-րդ կետերով.

որոշում եմ՝

1. Վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի 0,5հա այլ հողատեսք հողամասը (լոտ1, կադաստրային ծածկագիր 04-074-0108-0051) բաց աճուրդով:
   Աճուրդային կարգով հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել 46000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 2300 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 2300 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 ՀՀ դրամ:
2. Վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի 0,3444հա այլ հողատեսք հողամասը (լոտ2, կադաստրային ծածկագիր 04-074-0107-0147) բաց աճուրդով:
   Աճուրդային կարգով հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել 40000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 2000 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ***ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ***

2021 թվականի ապրիլի 02
Նորակերտ համայնք